ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ
НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

ՋՐՎԵԺԻ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1979 թ. գարնանը շինարարական աշխատանքների ժամանակ Ջրվեժում (Երևանի քաղաքային տարածք) բացվեց վաղ միջնադարյան գերեզմանոց։ Մինչև մեր պեղումները դամբարանադաշտը լրջորեն վնասված էր շինարարների կողմից։ Տեղում կատարվեց հետազոտություն և պեղվեց 13 դամբարան։ Դամբարանները փորված էին կրաքարի ամուր շերտում, իսկ թաղումները կատարված էին քարե սարկոֆագների և սալարկղների մեջ (նկ. 1, 2)։

Հանգուցյալները թաղված էին արևելագիր, որը վկայում է թաղման քրիստոնեական բնույթի մասին։ Կավե և քարե դագաղներում հանգուցյալին թաղելու սովորությունը Հայաստանում հայտնի է դեռևս ուրարտական[1] և անտիկ[2] ժամանակաշրջանից։ Այդ մասին արժեքավոր վկայություններ կան վաղ միջնադարի մասնագետների մոտ։ Քրիստոնեական վարդապետության ընդունման ժամանակ զոհված նահատակներին հիշատակելիս Հովհան Մամիկոնյանը գրում է. «Իսկ զԱթանադինէին զզլուխն և զաջ ձեռն մինչև զդոտին զամենայն հատեալ ընդ մէջ և զնորայն եղաք ի կաւէ տապան»[3]։

Մեկ այլ առիթով պատմիչը հիշատակում է քարե դագաղների օգտագործումը. «Եւ անդ ձեռն ի գործ արկեալ շինուածոյ եկեղեցոյն և նոյն երինակաւ ի գիշերի կազմեցաք զտեղի նշխարացն և եղաք ի քարեայ տապան առնաչափ զերկուց վկայիցն մերձ առ դուռն եկեղեցւոյն յաշակողմն»[4]։

Սալարկղային թաղումները տարածված էին վաղմիջնադարյան և հելլենիստական հուշարձաններում և միանգամայն ընդունելի կարելի է համարել այն տեսակետը, թե նմանօրինակ մրշակված սալերն ու քարե դագաղները հնում պատրաստվել են հատուկ վարպետների կողմից և վաճառվել[5]։

Ջրվեժի պեղված դամբարաններում հանգուցյալների կմախքները քայքայված էին, նյութական մշակույթի մնացորդները՝ սակավ։ Բացված դամբարաններից միայն երկուսն էին հագեցված հնագիտական նյութերով, որ հիմնականում կազմում էին հանգուցյալի արդուզարդը։

Ուսումնասիրվող առաջին դամբարանը տուֆից դագաղ է (1,0×0,76×0,28 մ)։ Բացվել է 90 սմ խորության վրա և պեղվածներից թվով չորրորդն է։ Այս դամբարաններից հայտնաբերված նյութը սերդոլիկից տակառաձև ուլունքներն էին և իրարից անջատ ծայրերով զանգվածեղ ապարանջանը (նկ. 3, 7)։

Դամբարանը թվագրող կարևոր կնվան է ապարանջանը, որի զուգահեռները լայնորեն հանդիպում են V—VI դդ. հուշարձաններում (Էջերի, Սամթավրո, Նախշիգորա, Զվելի, Անաքա, Մրցխեթա, Գուրջաանի, Կիզիկի և այլն)[6]։

Հարուստ նյութեր էր պարունակում դամբարանադաշտի մանկական թաղումներից մեկը

---

[1] С. А. Есаян, А. А. Калантарян. Позднеурартское погребение Ошаканского могильника .— Историко - филологический журнал, 1976, № 3, с. 269.

[2] Ж. Д. Хачатрян. Гарин V. Античный некрополь (результаты раскопок 1956—1972 гг.). Ереван, 1976, с. 19.

[3] *Պատմութիւն Տարօնայ զոր թարգմանեց Զենոբ Ասորի. Վենետիկ, 1889, էջ 3։*

[4] *Նույն տեղում, էջ 39։*

[5] Б. Н. Аракелян. Значение раскопок в Гарни для изучения культуры древней Армении.—ВДИ, 1953, № 3, с. 158.

[6] М. М. Гумба. Новые памятники Цебельдинской культуры. Тбилиси, 1978, табл. X; IX—3, табл. LI 7—8; Н. И. Апхазова. Материальная культура раннесредневековой Грузии. Тбилиси, 1979, табл. II, рис. 22, табл. XX, рис. 5, табл. XXXVI, рис. 33, табл. XI, рис. 26, табл. XVII, рис. 46, табл XXI, рис. 25, табл. XXXVII, рис. 50.

(0,92×0,38 մ), որը դրված էր մեկ մետր խորության վրա։ Դագաղը դարձյալ տուֆից էր, ոտքի կողմում որոշակիորեն վնասված և գտնվում էր վերոհիշյալ դագաղից 1 մ 40 սմ հեռավորության վրա։ Դամբարանում հայտնաբերվեցին չորս ուլունք (երկուսն ապակուց, երկուսը գիշեր քարից) և երեք կնիքներ՝ երկուսն ապակուց, մեկը՝ սերդոլիկից։ Գիշեր քարից մշակված ուլունքները քառակուսի են, տափակ. յուրաքանչյուրն ուներ երկուական անցք։ Միջնադարում «գիշերը» մեծ համարում և կենցաղային լայն գործածություն ուներ։ Այն ընդունված

Նկ. 1

էր իբրև չար աչքը խափանող և բուժիչ քար։

Առաքել Դավրիժեցին հետևյալ կերպ է բնութագրում այդ քարը. «Սեպաճ է սև քար և թեթև է խիստ խոր ու սև է և իւր խասիաթն այն է՝ որ թէ ի փոքր տղեկան աչաց դէմն կախէն ի օրանն, նա զփոքր տղեկան աչքն սևացնէ, փորձված է և հայիլն ի յայս քարս զաչաց լոյսն աւելցնէ»[7]։ Արաբներն այդ քարին գրեթե նույն հատկություններն էին վերագրում, միայն ավելացնում էին հոգեկան հիվանդությունները (էպիլեպսիան), ատամի և գլխի ցավերը բուժելու հնարավորությունները[8]։ Հակառակ եկեղեցու արգելող կանոնների, միջնադարում ուլունքներին վերագրում էին բուժիչ հատկություններ, միաժամանակ ընդունելով իբրև պահպանակ[9]։

Դամբարաններում հայտնաբերված գնդաձև ուլունքները (տրամ. 1 սմ) մուգ կապույտ երանգ ունեն։ Մեկի վրայով անցնում է ալիքաձև սպիտակ շերտ (նկ. 3₅)։ Վերջինս թերևս այն ուլունքներից է, որն օգտագործվել է որպես

---

7 Պատմութիւն Առաքել Վարդապետի Դաւրիժեցւոյ. Վաղարշապատ, 1896, էջ 594։

8 Տե՛ս В. Супрычев. Черный янтарь древних.—Наука и религия, 1980, № 2, с. 25.

9 Հայոց կանոնագրքում այդ մասին կարդում ենք հետևյալը. «Որք ուլունս արկանէն վասն կրից կամ վասն այլ ինչ հմայութեանց բարբանչանաց կամ գրարաթեամբ որ վարին որոշեսցին լեկեղեցւոյ, զի թողին զԱստուած և գնացին առ ճանաչիկ Աստուածն Ակկարոնի»։ Տե՛ս Կանոնագիրք հայոց. հ. Բ, Երևան, 1971, էջ 62։

պահպանակ ծաղիկ հիվանդության ժամանակ[10]։

Դամբարանում գտնված կնիքները կիրառական արվեստի լավագույն նմուշներ են և հարևան ժողովուրդների հետ Հայաստանի մշակութային առնչությունները ներկայացնող կարևոր նյութեր։ Ապակե կնիքներից մեկի վրա փորագրված է խրոխտ դեմքով, շատ հստակ գծագրությամբ աչ թեքված ծնկադիր մի եղջերու (նկ. 3)։ Կնիքն օվալաձև է, 1 սմ տրամագծով։ Եղջերվի պատկերը լայն տարածում ուներ վաղ միջնադարյան արվեստում (Աղց. Քասաղ և

Նկ. 2

այլն) և հանդիսանում է ժամանակի մտածելակերպի գեղարվեստական մարմնավորումը։ Եղջերուն իր բուն նշանակությունից բացի հանդես էր գալիս նաև իբրև երկնային համաստեղության կարևոր տարրերից մեկը։ Անանիա Շիրակացին գրում է. «Յոյց մարդկան արուեստք են հինգ աստղն լուծ՝ հող. եղջերու՝ որ է այծ»[11]։ Այս տեսանկյունով բնորոշվում էր մարդկային բնավորությունը «որ ի նման ծնանի, գոռոզ և դաւաճան լինի»[12]։ Մեկ այլ դեպքում եղջերուն մարմնավորում էր քրիստոնեական դաղափարախոսությունը։ Համաձայն Սաղմոսի 64 հատվածի, եղջերուն հնագույն ժամանակներից խորհրդանշել է հավատացյալ մարդուն։ «Որպես փափաքէի յեղջերու յաղբերս ջրաց, այնպէս փափաքեի անձն իմ առ բեզ Աստուած...»։

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ կնիքների վրա պարթևական ժամանակներից ըն-

10 Տե՛ս Ա. Ռ. Իսրայելյան. Բուժիչ ուլունք պահպանակներ.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1979, № 3, էջ 88, նկ. 4։

11 Անանիա Շիրակացի. Տիեզերագիտություն և տոմար. Երևան, 1940, էջ 21։

12 Նույն տեղում։



Նկ. 3

դունված այս պատկերը հղկվել, մշակվել և նոր դրսևորումով ընդունվել է սասանյան ժամանակաշրջանում[13]։ Ա. Բիվարը նման կնիքները թվագրում է III—IV դդ[14], իսկ Նիսայում հայտնաբերված օրինակները մասնագետների կողմից ընդունված են իբրև պարթևական շրջանի կիրառական արվեստի գործեր[15]։ Ընդհա-

[13] Այսպիսի կնիք հայտնաբերվել է նաև Վաղարշապատի պեղումների ժամանակ։ Ա. Քալանթարը դրում է. «Հենց այս տիպի դամբարաններում գտնված իրական տվյալները պարթևական, սասանյան են». տե՛ս Ա. Քալանթար. Հին Վաղարշապատի պեղումները. Երևան, 1935, էջ 58—59։

[14] Catalogue of the Western Asiatic seals in the British Museum. Stamp seals. The Sassanian dynasty. By A.D.H. Bivar. London, 1969, p. 91, 119, 532 F. B.

[15] М. Е. Массон, Г. А. Пугаченкова. Оттиски Парфянских печатей из Ниссы.— ВДИ, 1954, № 4, рис. 1—17.

նուր բովանդակությամբ հանդերձ, պատկերագրական և ոճաբանական տարբերությունը զգալի է, ուստի պետք է մտածել, որ թեմատիկան դալիս է հնուց, բայց նոր դրսևորումներով շարունակվում սասանյան շրջանում։

Դամբարանում հայտնաբերված կնիքներից հաջորդը նույնպես ապակուց է, օվալաձև (նկ. 3_3), տրամագիծը՝ 1 սմ. պատկերված է նուրբ գծագրությամբ արված զրադաշտական մի զոհասեղան։ Կնիքների վրա կրակի պաշտամունքի հետ կապված պատկերներն ունեն զանազան դրսևորումներ՝ անոթներից դուրս ցայտող բոցի[16], աստիճանավոր պատվանդանի վրա հենվող[17] կամ գծերից կազմված ատրուշանի տեսքով[18]։

Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվող № 125 ժողովածուի որոշ կնիքների վրա հանդիպում են այս երեք տիպի զոհարան սեղանները։ Հետաքրքիրն այն է, որ 125/12, 125/21, 125/38 թվահամարների տակ եղած կնիքների վրա պատկերված զոհասեղանները համընկնում են մեր կնիքի պատկերին, թեպետ պատահական գյուտեր են հանդիսանում։

Դամբարանում գտնված հաջորդ կնիքը մշակված է սերդոլիկ քարից և իր ձևով ներկայացնում է հայտնի կաբոշոնը։ Կնիքի կլոր մակերեսին (նկ. 3_4) փորագրված է մի հետաքրքիր թռչուն։ Ուռուցիկ մարմնով, լայն պարզած թևերով, բաց կտուցով գծագրված թռչունը առանձնահատուկ նրբագծերով է արված։ Նմանօրինակ կնիքներ հանդիպում են Վրաստանում և Միջին Ասիայում[19]։

Երեք կնիքներն էլ թվագրվում են V—VII դդ., վերջին կնիքը՝ VI—VII դդ. (ուշ սասանյան)[20]։ Այս թվագրումը միանգամայն ընդունելի է և համապատասխանում է բնակավայրի գոյության և շերտագրական տեսակետից ճիշտ թվագրվող այլ հուշարձանների տվյալներին։

Ջրվեժն իբրև դաստակերտ հիշատակվում է V դարից։ Ղազար Փարպեցին գրում է. «Եվ հասեալք մոտ ի քաղաքն Դուին՝ յօրինէր Հազարաուխտ զճակատն այդ օրինի գործոյ պատերազմին և կարգեալ զռազմն ի միջոցէ մայրույն, որում խոսրովակերտն ասեն անցուցանէր ի վերայ դաստակերտին, մինչև ի լեռնակողմն զոր Ջրվէժն կոչէն»[21]։ Առանձնահատուկ ծաղկում ապրեց բնակավայրը VI դարում, երբ անցավ Ավանի տարածքի մեջ և կառավարվեց Հովհան կաթողիկոսի կողմից[22]։ Կնիքների թվագրումը հաստատվում է նաև զուգահեռ նյութերով։ Եղնիկի պատկերով նմանօրինակ կնիքը Մինգեչաուրում հայտնաբերվել է V—VII դդ. ստույգ թվագրվող դամբարանում[23]։

Եվ վերջապես, սասանյան կնիքների մեծամասնությունն ունեցել է կլոր կամ ձվաձև տեսք[24]։ Անկասկած հիշատակվող դամբարանադաշտը պատկանել է Ջրվեժ բնակավայրին, և այդ իրողությունը հաստատում են մեկը մյուսին լրացնող նյութական մշակույթի մնացորդներն ու մատենագրական տվյալները։

Իսկ ինչո՞վ բացատրել կնիքների առկայությունը մանկական այս թաղման մեջ։ Հանրահայտ է, որ Հայաստանում և այլուր կնիքներն ունեցել են բազմազան կիրառություն։ Դրանք առաջին հերթին հանդիսանում էին իշխանության և իրավունքի խորհրդանիշ։ Կնիքով որոշվել է տիրող գրաված սոցիալական դիրքը հասարակության մեջ և զբաղմունքը[25]։ Անտիկ շրջանում, ապա միջնադարում կնիքները կատարել են նաև պահպանակների դեր։ Տվյալ դեպքում մանկական այս թաղումը, ուր հանդիպող բոլոր ուլունքները կապվում են հմայիլի հասկացության հետ, թույլ են տալիս ենթադրելու, որ երեխան վախճանվել է ինչ-որ հիվանդությունից, և նրա կրած դարդերը պահպանակների դեր են կատարել։ Մյուս կողմից, քանի որ կնիքը տիրող ինքնությունը խորհրդանշող առարկա էր, ուստի պետք է մտածել, որ երեխան տվյալ հասարակության մեջ սոցիալական որոշակի դիրք և իշխանություն ներկայացնող մեկի գավակն է եղել[26]։

Հայաստանի միջնադարյան դամբարանները պեղվել են մասնակիորեն, իսկ ուսումնասիրու-

---

16 Նույն տեղում, նկ. 18—21։

17 В. Г. Луконин. Иран в III веке. М., 1979, табл. 1, 2, 3, 4.

18 R. Göbl. Der Sasanidischen Siegelkanon. Braunschweig, 1973, Taf. 33.

19 Նյութերը հրատարակված չեն։

20 Երախտագիտությամբ պետք է նշենք, որ մասնագիտական խորհուրդներով մեզ օգնել է Վ. Գ. Լուկոնինը։

21 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան. Թիֆլիս, 1907, էջ 317։

22 Н. М. Токарский. Джрвеж I. Результаты раскопок 1957. Ереван, 1959, табл. 16.

23 Տե՛ս Г. М. Асланов. К изучению раннесредневековых памятников Мингечаура.—КСИИМК, 1955, № 60, с. 70, рис. 29.

24 А. А. Калантарян. Раннесредневековые буллы Двина. Ереван, 1982, с. 52.

25 Կնիքների և կնքադրոշմների վերաբերյալ դոյություն ունի ընդարձակ գրականություն։ Տե՛ս նույն տեղում։

26 Անձնական են համարվել բոլոր այն կնիքները, որոնք կրել են բուսական կամ կենդանական պատկերներ։ Տե՛ս նույն տեղում, էջ 54։

թյունը տակավին նախնական վիճակում է։ Բացված դամբարանները հիմնականում վերաբերում են V—VII դդ.։ Դրանցում նյութի սակավությունը ստեղծել է այն տեսակետը, թե միջնադարյան թաղումներում արգելվել է իրեր զետեղելը։ Ջրվեժի պեղումներն ապացուցում են, որ հանգուցյալի հետ որոշ դեպքերում դրվել է նրա արդուզարդը։



Նկ. 4

Պատահական չէ, որ Մխիթար Գոշի դատաստանագրքում և Հայոց կանոնագրքում հանդիպում են հատուկ օրենքի ուժ ունեցող սահմանումներ, որոնք պատժի չափեր էին սահմանում գանձագողերի նկատմամբ։ «Զդիակողոպուտս եթէ ըմբռնեսցի և ապա կամօք խոստովանեսցի՝ ոչ մեռցի, իսկ եթէ ոք ոչ սպանցէ, քննեսցէ զնա սուրբ եկեղեցի՝ մինչև ի մահ որոշեսցի, քանզի տեղիք ապաշխարութեան չիք նմա։ Յայտ է յառացելոցս, թէ անզղջիցն մահ որոշեաց այլ այնպիսեացն արեան լիցի գին ըստ ցուցելոյ օրինակին, դարձեալ և՝ ապաշխարութիւն պատշաճիւ։ Եւ այդ լիցի դատաստան այդոցիկ իրաւացի»[27]։ Գոշի դատաստանագրքում հիշատակվող պատիժը հանդիպում է նաև հայկական կանոնագրքում[28]։ Իսկ Գրիգոր Լուսավորչի կանոններում հիշատակվում է հետևյալը. «Որ զգերեզման բանայ առ անձուկ՝ Դ ամ արտաքոյ և Ա ի ներքըս»[29]։ Այս կանոնները և սահմանված պատիժները, անկասկած, բխում են գանձագողության բաղում դեպքերը կանխելու նպատակից։

Ջրվեժի դամբարանադաշտից մոտ 100 մ հեռավորության վրա գոյություն ունեն գերեզմանային երկու կոթողներ։ Առաջինը հուշասյան բեկոր է (8 նիստերով), որի պեղման հնարավորությունը, տեղանքի խիստ կառուցապատված լինելու պատճառով, բացառվում է (Նկ. 4)։ Տուֆ քարից մշակված այսպիսի սյուներ հայտնաբերվել են Ավանում[30], Օշականում[31], Քոսաղբյուրում[32], Անգեղակոթում[33] և այլուր։

Ավանի և Օշականի հուշասյուների կանգուն դիրքը հնարավորություն է ընձեռում վերականգնելու Ջրվեժի հուշասյունը, որը պետք է ունենար նույնպիսի աստիճանավոր պատվանդան, մանավանդ, որ Քոսաղբյուրի մոտ հայտնաբերվել են այդպիսի հուշասյան խարիսխը և պատվանդանի աստիճանների բեկորները։ Քոսաղբյուրում են գտնվել նաև քարե խաչերի բազմաթիվ բեկորներ։ Այս ամենը հանգեցնում է այն հետևության, որ աստիճանավոր պատվանդանի վրա ութանիստ սյունն ունեցել է, թերևս, պարզ մշակումով մի խոյակ և ավարտվել է քարե մի խաչով։ Մյուսը քառակող, վաղ միջնադարյան Հայաստանում շատ տարածված սև տուֆից հուշակոթող է, որի քանդակների բովանդակությունը և մշակման եղանակը իր զուգահեռն ունի Դվինում[34] (Նկ. 3.)։ Սովորաբար, քառակող կոթողները բովանդակում են հարուստ մշակված թեմաներ՝ բուսական, երկրաչափական, կենդանական, աստվածաշնչային և այլն։ Այդ սյուժեները կոթողի բովանդակ երեսներն են պատում։ Տվյալ քառակոթողում միայն մի երեսն է քանդակազարդված, իսկ մընացած կողերն ունեն հարթ մշակում։ Երկրաչափական բնույթի քանդակն իրենից ներկայացնում է ուղղագիծ և կլոր շրջանակներ, որոնք ստեղծել են մկրատ հիշեցնող մի պատկեր, ընդգրկելով կոթողի մեկ երեսը։ Վերոհիշյալ կոթողները մասնագետների կողմից թվագրվում են VI—VII դդ.։ Ուրեմն Ջրվեժի գերեզմանները և որոշ հեռավորության վրա հայտնաբերված հուշակոթողները համաժամանակյա են։

Ջրվեժում բացված գերեզմանային հուշարձանները որոշակի գաղափար են տալիս վաղմիջնադարյան Հայաստանի կենցաղի կարևոր բնագավառներից մեկի՝ թաղման ձևերի, արարողությունների, ծեսերի, սովորությունների, ինչպես նաև գերեզմանային ճարտարապետության բնույթի մասին։

Ա. Ս. ԺԱՄԿՈՉՅԱՆ

---

27 Մ խ ի թ ա ր Գ ո շ. Գիրք դատաստանի. Երևան, 1975, էջ 354։

28 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, կազմեց Վ. Հակոբյան. Ա գիրք, Երևան, 1964, էջ 108։

29 Նույն տեղում, էջ 247։

30 Ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները. Երևան, 1982, էջ 29, աղ. 5։

31 Նույն տեղում, աղ. 20, նկ. ա։

32 Н. М. Т о к а р с к и й. Джрвеж Вохджаберд. II, Результаты раскопок 1958—62 гг. Ереван, 1964, с. 39.

33 Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX—XIII դդ. խաչքարերը. Երևան, 1984, նկ. 14, 15։

34 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Դվին քաղաքը և նրա պեղումները. Երևան, 1952, նկ. 126։